

ՀՈՎԻԻ ԺԻՐԱՅՐ ԱԲԵՂԱՅ ԹԱՇՋԱՆԻ 1964 ՏԱՐՈՒԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սիրելի անդամներ,

Տարի մը եւս բոլորեցինք այն օրէն ասդին երբ մեր տկար ուսերուն վիճակութցաւ յանձանձումը ծուխիդ հոգեւոր մատակարարութեան ծանր եւ դժուա րին պաշտօնը, զոր կատարեցինք սրտի ամենայն գոհունակութեամբ, ոչ թէ մեր ունեցած անձնական արժանիքով, որուն համար կը կասկածինք թէ ունինք, այլ Աստուծոյ ամենահաս ողորմութեամբ ու մեր առաջելաշնորհ ու երիցս երանեալ լուսաշող հայրապետներու թողած անգին ժառանգութեամբ, որ Հայաստանեայց Առաջելական Ուղղափառ Եկեղեցին է, որը եղած է բարոյական մեր հայրենիքը, ուր մեր ազատութեան եւ անկախութեան ծարտւը իր լիալիր յագուրդը գտած է, իբրեւ աղքիւրն ու ներշնչարանը մեր ազնուական գաղափարներուն ու պրթուն պահակը մեր բարոյական ու հոգեւոր կեանքին:

1964 տարին մեր համայնքին համար եղաւ իրապէս փոթորկալի ու տագնապեցուցիչ տարի մը, պահ մը նոյնիսկ մեր մէջ կասկած արթնցնելով թէ մեռնք ենք արդեօր իրաւ ժառանգորդները հայուն անկորնչական ժառանգութեան Գանապայի այս հիւրընկալ ափերուն: Գոհութիւն Աստուծոյ որ մեր տագնապներն ու փոթորիկները իրենց լուծումը գտան շնորհիւ հայուն խաղաղասիրական ու ներողամտութեան ոգիին, կ'ակնարկենք այն բարեբաստիկ թուականին երբ Կիրակի Յունիս 7, 1964 ին Թեմիս Բարեխնամ Սրբազան Առաջնորդ Հօր նախազա հութեամբ լուսաբանութիւններ տրուեցան եւ ընդհանուր հասկացողութիւն գոյացաւ Եկեղեցւոյս ծխական Խորհուրդիս, Նորակառոյց Մշակոյթային Սրահի շինութեան յանձնախումբին ինչպէս նաեւ Սրահի շինութեան Հաշուեքննիչ յանձնախումբի անդամներուն միջեւ:

Եւ ընդառաջ երթալով Առաջնորդ Սրբազան Հօր թելադրութեան թէ Սրահի շինութեան գործը իր ընդհանրութեան մէջ աւարտած է արդէն, Սրահի շինութեան յանձնախումբը ինչպէս նաեւ Սրահի շինութեան Հաշուեքննիչ յանձնախումբը մեր միջոցաւ իրենց հրաժարականները կը ներկայացնեն պատկառելի ծխական ժողովիդ, մաղթելով բարեպաշտ եւ Եկեղեցասէր ժողովուրդիդ կրջանկութիւն, Մէր եւ Միութիւն:

Ի խորոց սրտի կը մաղթենք որ անցեալի տխուր դէպքերը, մեր յուշա րարները ըլլան զմեզ սրբազրելու եւ մեր անձերէն վեր տեսնելու մեր անգին ժառանգութիւնը, Եղբայրական սիրոյ անկեղծ զգացումներով յարաբերուելով իրարու հետ, թէ Օրէնքի եւ թէ մանաւանդ Սիրոյ գերիշխանութեամբ պայմանաւո բելով մեր ազգային Եկեղեցական կեանքը:

1964-ի տեղեկագիր հովիւ ժիրայր Աբդ. Թաշճեանի

Սրտերու խաղաղութեամբ վերջացած տարւոյն փառք կու տամ Աստուծոյ եւ սիրով կ'ողջունեմ բոլորդ:

ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ.— Տարուան ընթացքին գրեթէ ամէն կիրակի Ս. Պատարագ մատուցած ենք, միայն հետեւեալ առիթներուն Ս. Պատարագ չենք մատուցած պաշտօնով կամ մասնաւոր հրաւերով քաղաքէս բացակայութեանս պատճառաւ

ա. Ապրիլ 12, 1964 կիրակի, Գլիվլէնտի Եկեղեցւոյ օծման,

բ. Մայիս 8, 1964 կիրակի, Թեմական Պատգամաւորական ժողովին,

գ. Մեպտեմբեր 6, 1964 կիրակի, Հ. Ե. Ե. Կ. Ա. ի Տարեկան Համաժողովին:

Անցեալ տարուան ընթացքին ուրախ ենք որ իրենց ներկայութեամբ Սուրբ Եկեղեցիս պայծառացուցած են հետեւեալ Հոգեշնորհ Հայրերն ու Եղբայրները, ոմանք մէկէ աւելի առիթներով,

ա. Առաջնորդական փոխանորդ Հոգշ. Տղիշէ Վրդ. Կիզիրեան, Կիրակնօրեայ Դպրոցի Ուսուցիչներու Խորհրդակցական ժողովի, եւ Դպրաց Դասու Տարեկան Համաժողովի առաքելութեամբ,

բ. Հոգշ. Տղագաէն Վրդ. Թաղոյեան Աւագ-Հինգշաբթի

գ. Հոգշ. Գարեգին ծայրագոյն Վրդ. Գաղանճեան Ապրիլեան Եղեռնի Յուշա տօնին եւ Ս. Եկեղեցւոյս 11րդ տարեդարձի հանդիսութեանց:

դ. Գերշ. Տ. Տիրան Ս. Արք. Ներսոյեան Հ. Ե. Ե. Կ. Ա. ի տեղւոյս մասնաճիւղի Տասներորդ տարեդարձի հանդիսութեան նոյեմբեր 8, 1964ին:

Կիրակի Հոկտեմբեր 11, 1964ի Առաջնորդի փոխանորդութեան հանգամանքով պատարագեց եւ քարոզեց Հոգշ. Տղիշէ Վրդ. Կիզիրեան, Դպրաց Դասերու Ընկերակցութեան Տարեկան Համաժողովին առիթով: Սոյն օրուան Պատարագը յիշատակութեան արժանի է, երբ մեր ծուխը, առիթը ունեցաւ վայելելու քոյր Դպրաց Դասերու ներկայացուցիչներուն հոգեզմայլ երգեցողութիւնը:

Պարտք կը զգանք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Ս. Եկեղեցւոյս Սարկաւագ ու Դպրաց Դասերուն, ինչպէս նաև Դպրապետ Տիրացու Մինաս Սէլեանի եւ Երգեհոնահար Տիկին Քրիստինէ Գույումնեանի, որոնց մասնակցութեամբ ունեցած ենք մեր ժամապաշտութիւնները:

ՃԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.— Անցեալ տարուան ընթացքին ունեցած ենք

18 Մկրտութիւն եւ Դրոշմ , մին կատարուած Հոգշ. Տ. Կաղագէն Վրդ. Թաղոյ-եանի ձեռամբ, եւ երկուքը կատարուած մար կողմէ մին Բրէսթըն, եւ միւսը Քիշընը քաղաքներուն մէջ:

Զ Զափահասներու Դրոշմ

Զ Պսակադրութիւն եւ 1 խառն Պսակադրութիւն

11 Յուղարկաւորութիւն որոնցմէ մին Պրանթֆորտի մէջ եւ երեքը Համիլթընի մէջ:

1964-ի տեղեկագիր հովիւ ժիրայր Աբդ. Թաշնեանի

Զանացած ենք Ս. ծննդեան եւ Ս. Զատկի տօներուն առիթով Տնօր հնէքի այցելութիւններ տալ մեր համայնքին, անոնց տանելով Ս. ծննդեան եւ Ս. Զատկի տօներուն օր հնութիւններին ու բարեմաղթութիւնները:

ԾՈՒԽԻՍ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Օրէ օր ստուարացող Թորանթօհայ Գաղութը, այսօր ամենէն աւելի լուրջ մտահոգութեանց առարկայ պէտք է դառնայ: Որքան որ մեր ժամանակ ները թոյ լատու եղան ու մեր միջոցները ներեցին, ջանացինք ըստ կարելոյն կապ հաստատել նորահաստատ հայ ընտանիքներուն հետ, ինչպէս նաեւ շարունակե ցինք մեր այցելութիւնները տալ շրջակայ հայ գաղութներուն:

Գոհունակութեամբ կու գանք հաղորդել պատկառելի ծխական ժողովիդ թէ, Ս. Եկեղեցւոյ, ծխական Խորհուրդին հետ համախորհուրդ անցեալ Սեպտեմբերին յարաբերութեան մտանք նիակարա Թեմին Անգլիքըն Եկեղեցւոյ Առաջնորդարանին հետ, Համիլթընի մեր հայ համայնքի Եկեղեցական մատակարարութեան համարվայր մը ունենալու համար: Ուրախ ենք որ տեղուոյն Անգլիքըն Եկեղեցին ինչպէս միշտ այս անզամ եւս իր Եղբայրական ոգիով ընդառաջ երթալով մեր խնդրանքին մեզի տրամադրեց Համիլթընի Պարթըն փողոցին վրայ գտնուող Անգլիքըն Եկեղեցին պարբերաբար հոն ունենալու համար մեր Եկեղեցական արարողութիւնները, ի միի թարութիւն տեղուոյն հայ բարեպաշտ ժողովրդեան: Արդէն իսկ ունեցած ենք Երեք յաջորդական Ս. Պատարագի մատուցումներ, Հոկտեմբեր, Դեկտեմբեր եւ Ցունվար ամիսներուն ընթացքին:

Այսօր Թորանթօհայ համայնքը կը հաշուէ առաւել քան 1300 անձ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Տարուան ընթացքին հետեւեալ տեսակի այցելութիւններ տուած ենք հիւանդներու, հիւանդանոց կամ տունը, ցաւակցական, վարչական եւ կրթական գործերով, օտար Եկեղեցիներու հոգեւոր պաշտօնակիցներու, Ողջերթի, Մկրտութեանց եւ Պսակադրութեանց, եւ այլ զանազան ընկերային հաւաքոյթներու առիթներով:

ԳՐԱՍԵՂԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ.— Անցեալ տարուան ընթացքին մեր ուժերուն ներած չափով սկսանք հրատարակել Եկեղեցւոյս ծխաթերթիկը, իբր ԼՐԱՏՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ, պարբերաբար կրօնական յօդուածներու եւս տեղ տալով: Հոս եւս պարտք կը զգանք հրապակաւ մեր շնորհակալութիւնը յայտնել Տիար Վարդերես Յակոբեանի, որ բարի եղաւ մեր խնդրանքին ընդառաջելով, իր թանկագին մասնակցութիւնը բերել, անձամբ տպագրելով ծխաթերթիկը: Այս առիթիւ շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց որոնք պարբերաբար փութացին իրենց օժանդակութիւնը ընձեռել ծխաթերթիկիս հրատարակչական աշխատանքներուն:

Զանացած ենք կանոնաւոր կերպով Թղթակցութեամբ կապ հաստատել մեր Թեմի Առաջնորդարանին հետ, անկե Եկած Առաջնորդական հրահանգներու գործադրութեան համար: Շնորհակալութիւն նաեւ բոլոր այն ազնիւ անձերուն, որոնք գրասենեկային աշխատանքներուն մէջ իրենց կարեւոր և անհրաժեշտ օգնութիւնը ընձեռած են:

1964-ի տեղեկագիր Հովհան Ժիրայր Աբդ. Թաշճեանի

Ի վերջ բանիս իմ սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ. Եկեղեցւոյս բոլոր մարմիններուն եւ ծխականներուն և ի մասնաւորի Եկեղեցւոյս ծխական խորհուրդին, որոնք շինարար եւ մանաւանդ համերաշխ գործակցութեամբ յաջող եւ արդիւնաւոր տարի մը բոլորած ըլլալու հոգեկան երջանկութիւնը ունեցան, եւ որոնք գործակցեցան մեզի մեր կրօնական եւ հոգեւոր պարտականութեանց մէջ, եւ կ'աղօթեմ որ ամենաքարին Աստուած առողջութիւն, արեւշատութիւն եւ յարատեւ յառաջդիմութիւն պարզեւէ բոլորին, եւ իրենց բոլոր ծրագիրներուն կատարեալ յաջողութիւն:

Պէտք է դիմենք յառաջ, ետ չմնալու համար: Ասոր համար պէտք ունինք հաւատքի, զոհողութեան ոգիի, եւ տեսիլքի: Ասոնք կը մաղթեմ ձեզ ի Տեառնէ:

Թորանթօ, Գանատա
6 Փետրուար, 1965

Ժիրայր Աբեղայ Թաշճեան
Հոգեւոր Հովհան
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ